

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

►B

Խորհրդի թիվ 3820/85 կանոնակարգը (ԵՏՀ) եւ Խորհրդի 91/439/ԵՏՀ հրահանգը փոփոխող եւ Խորհրդի 76/914/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2003 թվականի հուլիսի 15-ի 2003/59/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Ապրանքներ կամ ուղեւորներ փոխադրող որոշ տրանսպորտային միջոցների վարորդների նախնական որակավորման եւ պարբերական վերապատրաստման մասին

(ՊՏ L 226, 10.09.2003թ., էջ 4)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

	թիվ	էջ	ամսաթիվ
►M1	<u>Խորհրդի 2004 թվականի ապրիլի 26-ի L 168</u>	35	01.05.2004թ.
	<u>2004/66/ԵՀ հրահանգով</u>		
▼M2	<u>Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի L 363</u>	344	20.12.2006թ.
	<u>2006/103/ԵՀ հրահանգով</u>		
►M3	<u>Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 L 311</u>	1	21.11.2008թ.
	<u>թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008 (ԵՀ)</u>		
	<u>կանոնակարգով.</u>		

▼B

Խորհրդի թիվ 3820/85 կանոնակարգը (ԵՏՀ) եւ Խորհրդի 91/439/ԵՏՀ հրահանգը փոփոխող եւ Խորհրդի 76/914/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2003 թվականի հուլիսի 15-ի 2003/59/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Ապրանքներ կամ ուղեւորներ փոխադրող որոշ տրանսպորտային միջոցների վարորդների նախնական որակավորման եւ պարբերական վերապատրաստման մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 71-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (2),

Տարածաշրջանային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան (3),

Քանի որ

- 1) թիվ 3820/85 (4) Կանոնակարգի (ԵՏՀ) 5(1), (2) եւ (4) հոդվածով նախատեսվում է, որ որոշ վարորդներ, որոնք ճանապարհով ապրանքների եւ ուղեւորների փոխադրումներ են իրականացնում, իրենց տարիքից, օգտագործվող տրանսպորտային միջոցից եւ ուղեւորության ճանապարհի երկարությունից ելնելով, մասնագիտական իրավասության մասին վկայագիր ունենան որոշ ավտոտրանսպորտի վարորդների համար վերապատրաստման դասընթացների նվազագույն մակարդակի մասին Համայնքի կանոնների համաձայն: Այդ նվազագույն մակարդակը սահմանվում է 76/914/ԵՏՀ հրահանգով (5),
- 2) հաշվի առնելով այն, որ թիվ 3820/85 կանոնակարգի դրույթները վերաբերում են վարորդների շատ փոքր տոկոսին եւ որ ներկայումս միայն որոշ անդամ պետություններում են պահանջվում վարորդների պարտադիր վերապատրաստման դասընթացներ, ներկայումս Համայնքի տարածքում վարող վարորդների մեծ մասը իրենց գործունեությունն իրականացնում են միայն վարորդական իրավունքի հիման վրա,
- 3) վարորդներին ճանապարհային տրանսպորտի շուկայի զարգացման արդյունքում

առաջացած նոր պահանջները բավարարելու հնարավորություն տալու համար Համայնքի կանոնները պետք է կիրառելի լինեն բոլոր վարորդների համար, անկախ այն բանից՝ թե նրանք ինքնագրադ կամ աշխատավարձով աշխատող անձինք են, թե գործում են իրենց հաշվին, կամ որպես վարձու, կամ պարգևատրմամբ աշխատող,

- (4) Համայնքի նոր կանոնների մշակումը նպատակ ունի ապահովելու, որ վարորդն իր որակավորման միջոցով հասնի այնպիսի մի մակարդակի, որի արդյունքում վարորդական գործունեությունը կդառնա մատչելի եւ կկարողանա այն իրականացնել,
- 5) մասնավորապես, նախնական որակավորում ունենալու պարտականությունը եւ պարբերաբար վերապատրաստումներ անցնելը նպատակ ունեն բարելավելու ճանապարհի եւ վարորդի անվտանգությունը, այդ թվում՝ այն գործողությունների ընթացքում, որոնք իրականացվում են վարորդի կողմից, երբ տրանսպորտային միջոցը կանգնած է: Ավելին, վարորդի մասնագիտության ժամանակակից բնույթը պետք է առաջացնի երիտասարդ անձանց հետաքրքրությունն այս մասնագիտության նկատմամբ՝ նպաստելով նոր վարորդների աշխատանքի ընդունմանը, երբ դրա կարիքը կա,
- 6) մրցույթի ոչ հավասար պայմաններից խուսափելու համար սույն Հրահանգը պետք է կիրառել ինչպես անդամ պետությունների քաղաքացիների կողմից վարելու գործողության, այնպես նաեւ երրորդ երկրների քաղաքացիների նկատմամբ, ովքեր աշխատում են անդամ պետությունում հիմնված կազմակերպության համար,
- 7) վարորդի՝ իր պարտականությունների կատարումը գնահատելու համար անդամ պետությունները պետք է վարորդին տրամադրեն մասնագիտական որակավորման վկայագիր, այսուհետ՝ ՄՈՎ, որը հավաստիացնում է վարորդի նախնական որակավորում ունենալը կամ պարբերաբար վերապատրաստում անցնելը,

- 8) որոշ անդամ պետություններում առկա համակարգերի տարբերության պարագայում անդամ պետությունները պետք է կարողանան ընտրել մի քանի տարբերակներից, այնպես, որ նպաստեն նախնական որակավորման մասին դրույթների պահպանմանը,
- 9) վարորդի որակավորումը պահպանելու համար գործող վարորդները պարտավոր են պարբերաբար վերապատրաստումներ անցնել իրենց մասնագիտության համար անհրաժեշտ հմտությունների վերաբերյալ,
- 10) նախնական որակավորման եւ պարբերական վերապատրաստումների նվազագույն պահանջները վերաբերում են վարելու ժամանակ եւ տրանսպորտային միջոցի կանգնած լինելու ժամանակ անվտանգության կանոններին: Ձգոն վարելը, որն օգնում է նախանշելու վտանգները, զիջելու ճանապարհից մյուս օգտվողներին, միաժամանակ ապահովում է վառելիքի ռացիոնալ սպառում, դրական ազդեցություն է ունենում ինչպես հասարակության, այնպես էլ նաեւ ավտոճանապարհային տրանսպորտի ոլորտի վրա,
- 11) սույն Հրահանգը չպետք է ազդեցություն ունենա այն վարորդի իրավունքների վրա, ով վարորդական վկայական ունի, որն անհրաժեշտ է՝ վարորդական գործունեություն իրականացնելու համար, մինչեւ այն ամսաթիվը, որը սահմանվել է նախնական որակավորումը կամ պարբերաբար վերապատրաստումները հավաստագրող ՄՈՎ-ի ձեռքբերման համար,
- 12) միայն վերապատրաստման դասընթացների այն կենտրոնները պետք է կարողանան կազմակերպել նախնական որակավորման եւ պարբերական վերապատրաստման դասընթացների համար անհրաժեշտ դասընթացներ, որոնք հաստատվել են անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից: Իրավասու մարմիններն այս հաստատված կենտրոնների որակն ապահովելու նպատակով պետք է սահմանեն դրանք հաստատելու ներդաշնակեցված չափանիշներ՝ ներառելով բարձր մակարդակի մասնագիտացվածությունը,

- 13) ոչ միայն անդամ պետությունների իրավասու մարմինները, այլ նաեւ ցանկացած մարմին, որը նշանակվել է նրանց կողմից, պետք է պատասխանատու լինի՝ նախնական որակավորման թեստավորումը եւ պարբերական վերապատրաստման դասընթացները կազմակերպելու համար: Ճանապարհների անվտանգության եւ մրցակցության հավասարության համար սույն Հրահանգի կարեւորությունը հաշվի առնելով՝ անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է վերահսկեն նման թեստերը,
- 14) անդամ պետությունները պետք է նախատեսեն, որ պարբերական վերապատրաստման դասընթացի առաջին փուլն ավարտվի եւ պետք է թողարկվի համապատասխան ՄՈՎ–ը, ՄՈՎ–ի թողարկման ամսաթվից հետո հինգ տարվա ընթացքում, որը վկայում է նախնական որակավորման մասին կամ որոշ վարորդների իրավունքների գործողության ժամկետից հետո: Պետք է նաեւ հնարավոր լինի, որ այս ժամկետները կրճատվեն կամ երկարաձգվեն: Առաջին պարբերական վերապատրաստման դասընթացից հետո վարորդը պետք է յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ վերապատրաստման դասընթացներ պարբերաբար անցնի,
- 15) անդամ պետության քաղաքացի վարորդի կողմից սույն Հրահանգով նախատեսված ՄՈՎ–ն ունենալը հավաստագրելու եւ տարբեր ՄՈՎ–երի փոխադարձ ճանաչումն ապահովելու համար՝ անդամ պետությունները պետք է այդ նպատակով առանձնացված Համայնքի ներդաշնակեցված կողը, կողի ժամկետի հետ մեկտեղ, կցեն վարորդական վկայականի կամ վարորդական որակավորման նոր քարտի վրա, որը պետք է անդամ պետությունների կողմից փոխադարձորեն ճանաչվի, որի ներդաշնակեցված մոդելը սահմանվում է սույն Հրահանգով: Այս քարտը պետք է բավարարի անվտանգության այն պահանջները, որոնք բավարարում է վարորդական վկայականը՝ հաշվի առնելով այն իրավունքների կարեւորությունը, որն այն տրամադրում է ճանապարհի անվտանգության համար, ինչպես նաեւ մրցակցության պահանջների հավասարությունը: Անդամ պետություններին տրվող Համայնքի կողը նոր քարտի վրա կցելու հնարավորությունը թույլ է տալիս նրանց սահմանել վարորդական վկայականի գործողության այնպիսի ժամկետ, որը չի համընկնում պարբերական վերապատրաստման վավերականության ժամկետի հետ՝ պայմանով, որ 91/439/ԵՏՀ(4) Հրահանգով նախատեսվում է, որ յուրաքանչյուր անդամ պետություն իրեն իրավունք

վերապահի ազգային չափանիշների հիման վրա սահմանելու իր կողմից թողարկվող վարորդական վկայագրերի վավերականության ժամկետը,

- 16) 91/439/ԵՏՀ հրահանգի I եւ Iա հավելվածները պետք է փոփոխվեն այնպես, որ այդ հավելվածներում սահմանված ներդաշնակեցված կողերի եւ ենթակողերի ցուցակում ավելացվի Համայնքի նոր կողը, սահմանելով այն ժամկետը, մինչեւ երբ վարորդը բավարարում է մասնագիտական հմտությունների պահանջը, անկախ այն բանից, դա նախնական որակավորում է, թե պարբերական վերապատրաստում,
- 17) վկայագրման հատուկ պահանջները պետք է, սույն Հրահանգի համաձայն, սահմանվեն երրորդ երկրների քաղաքացի վարորդների համար,
- 18) Հանձնաժողովը դիտանցում է սույն Հրահանգի իրականացումը, մասնավորապես, հաշվի առնելով նախնական որակավորման տարբեր համակարգերը, որոնք այն սահմանում է եւ Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ եւ Եվրոպական տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտե ու Տարածաշրջանների կոմիտե հաշվետվություն է ներկայացնում այս հարցի վերաբերյալ,
- 19) հաշվի առնելով սույն Հրահանգով ընդգրկվող վարորդների թիվը՝ նախնական որակավորման մասին դրույթները պետք է կիրառվեն երկու փուլով, կախված այն բանից, թե ուղեւորների՞, թե՞ ապրանքների փոխադրում է իրականացվում: Սույն Հրահանգի փուլային կիրառումը ապրանքներ կամ ուղեւորներ փոխադրող տրանսպորտային միջոցների վարորդների նախնական որակավորման վերաբերյալ նույնպես պետք է հնարավոր դարձնի, որ պարբերական վերապատրաստման դասընթացները փուլերով իրականացվեն,
- 20) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ

որոշմանը [7] համապատասխան,

- 21) երկու տարբեր ժամկետներում նախնական որակավորման վերաբերյալ դրույթների կիրառումը հաշվի առնելու համար թիվ 3820/85 Կանոնակարգի (ԵՏՀ) համապատասխան դրույթները, ինչպես նաև 76/914/ԵՏՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչել,
- 22) սակայն ցանկալի է, որ Համայնքի օրենսդրության սկզբունքները պահպանելու համար՝ տրանսպորտային միջոցներ վարող վարորդները, երբ իրենց գործունեությունն ավելի քիչ ազդեցություն է ունենում ճանապարհի անվտանգության վրա կամ, երբ սույն Հրահանգի պահանջները սահմանում են ոչ համաչափ տնտեսական կամ սոցիալական պատասխանատվություն, պետք է ազատվեն սույն Հրահանգի կիրառումից,
- 23) քանի որ առաջարկվող միջոցառման նպատակը, այն է՝ նախնական որակավորման եւ պարբերական վերապատրաստման դասընթացի համար Համայնքի մակարդակով չափանիշների սահմանումը, չի կարող լիարժեքորեն իրագործվել անդամ պետությունների կողմից եւ այդ պատճառով կարող է առաջարկվող գործողության մասշտաբի ու ազդեցությունների պատճառով ավելի հեշտ հասնել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ձեռնարկել՝ լրացուցչության (սուբսիդիարության) սկզբունքի համաձայն, ինչպես սահմանված է Պայմանագրի 5-րդ հոդվածով: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգով չի նախատեսվում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակին հասնելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Գործողության ոլորտը

Սույն Հրահանգը կիրառվում է վարորդական գործունեության դեպքում, որն իրականացնում են

ա) անդամ պետության քաղաքացիները եւ

բ) երրորդ երկրների այն քաղաքացիները, ովքեր աշխատում են անդամ պետությունում հիմնադրված կազմակերպությունում,

Այսուհետ՝ «վարորդներ», որոնք աշխատում են ավտոտրանսպորտի ոլորտում Համայնքում, հանրության համար բաց ճանապարհներին՝ օգտագործելով

–տրանսպորտային միջոցներ, որոնց համար անհրաժեշտ է C1, C1+E, C կամ C+E կարգի վարորդական վկայական, ինչպես նշված է 91/439/ԵՏՀ հրահանգում կամ վարորդական վկայական, որը հավասարազոր ուժ ունի,

–տրանսպորտային միջոցներ, որոնց համար անհրաժեշտ է D1, D1+E, D կամ D+E կարգի վարորդական վկայական, ինչպես նշված է 91/439/ԵՏՀ հրահանգում կամ այնպիսի վարորդական վկայական, որը հավասարազոր ուժ ունի:

Հոդված 2

Բացառություններ

Սույն Հրահանգը չի կիրառվում այն վարորդների նկատմամբ, ովքեր

ա) վարում են տրանսպորտային միջոցներ՝ 45կմ/ժ չգերազանցող առավելագույն թույլատրելի արագությամբ.

բ) վարում են այնպիսի տրանսպորտային միջոցներ, որոնք օգտագործվում են զինված ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության, հրշեջ ծառայությունների եւ հասարակական կարգի պահպանման համար պատասխանատու ուժերի կողմից կամ գտնվում են այդ մարմինների հսկողության տակ.

գ) վարում են այնպիսի տրանսպորտային միջոցներ, որոնք տեխնիկական զարգացման, վերանորոգման կամ պահպանման նպատակներով անցնում են ավտոճանապարհային

փորձարկումներ, ինչպես նաև վարում են նորաստեղծ կամ վերակառուցված տրանսպորտային միջոցներ, որոնք դեռևս չեն հանձնվել շահագործման.

դ) վարում են այնպիսի տրանսպորտային միջոցներ, որոնք օգտագործվում են արտակարգ դրության ժամանակ կամ փրկարարական առաքելություն իրականացնելիս

ե) վարում են այնպիսի տրանսպորտային միջոցներ, որոնք օգտագործվում են վարորդական դասընթացների ժամանակ ցանկացած մարդու համար, ով ցանկանում է ձեռք բերել վարորդական վկայական կամ ՄՈՎ, ինչպես նշված է 6 եւ 8(1) հոդվածներում.

զ) վարում են տրանսպորտային միջոցներ ոչ առետրային նպատակով անձնական օգտագործման իրերի կամ ուղեւորների փոխադրման համար.

է) վարում են այնպիսի տրանսպորտային միջոցներ, որոնք տեղափոխում են նյութեր կամ սարքավորումներ, որոնք պետք է օգտագործվեն վարորդի կողմից իր աշխատանքի ընթացքում՝ պայմանով, որ տրանսպորտային միջոցը վարելը վարորդի հիմնական գործունեությունը չէ:

Հոդված 3

Որակավորումը եւ վերապատրաստումը

1. 1-ին հոդվածով սահմանված վարորդական գործունեությունը ենթակա է նախնական պարտադիր որակավորման եւ պարտադիր պարբերական վերապատրաստման դասընթացների: Անդամ պետություններն այդ նպատակով նախատեսում են՝

ա) նախնական որակավորման համակարգ

Անդամ պետություններն ընտրում են հետեւյալ տարբերակներից՝

i) դասընթացներին այցելելու եւ թեստավորման համադրությունը

I հավելվածի 2(2.1) հոդվածի համաձայն՝ այս նախնական որակավորումը ներառում է պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն որոշակի ժամանակահատվածի համար: Այն ավարտվում է թեստով: Թեստի բարեհաջող ավարտի դեպքում որակավորումը հավաստագրվում է ՄՈՎ-ով, ինչպես նախատեսված է 6(1)(ա) հոդվածով,

ii) միայն թեստեր ընդգրկելու տարբերակը

1 հավելվածի 2(2.2) հոդվածի համաձայն՝ այս նախնական որակավորումը չի ներառում պարտադիր դասընթացների մասնակցություն, այլ միայն տեսական մասը եւ գործնական թեստեր: Թեստերի բարեհաջող ավարտից հետո որակավորումը հավաստագրվում է ՄՈՎ-ով, ինչպես նախատեսված է 6(1)(բ) հոդվածով: Սակայն անդամ պետությունը կարող է լիազորել վարորդին առավելագույնը երեք տարի ժամկետով վարել իր տարածքում, նախքան ՄՈՎ ձեռք բերելը, եթե նա առնվազն վեց ամիս մասնակցում է ազգային մասնագիտական վերապատրաստման դասընթացներին: Մասնագիտական այս վերապատրաստման դասընթացների համատեքստում (i) եւ (ii) կետերում նշված թեստերը կարող են ավարտվել փուլերով,

բ) պարբերական վերապատրաստման համակարգ

1 հավելվածի 4-րդ հոդվածի համաձայն՝ պարբերական վերապատրաստումը ենթադրում է դասընթացներին պարտադիր մասնակցություն: Դա հավաստագրվում է ՄՈՎ-ով, ինչպես նախատեսված է 8(1) հոդվածով:

2. Անդամ պետությունները նաեւ կարող են նախատեսել արագացված կարգով նախնական որակավորման համակարգ, այնպես, որ վարորդը կարողանա վարել 5(2)(ա)(ii) եւ (բ) ու 5(3)(ա)(i) եւ (բ) հոդվածներում նախատեսված դեպքերում:

1 հավելվածի 3-րդ հոդվածի համաձայն՝ արագացված կարգով նախնական որակավորումը ենթադրում է դասընթացներին պարտադիր մասնակցություն: Այն ավարտվում է թեստով: Թեստի բարեհաջող ավարտի դեպքում որակավորումը հավաստագրվում է ՄՈՎ-ով, ինչպես նախատեսված է 6(2) հոդվածով:

3. Անդամ պետությունները կարող են 96/26/ԵՀ հրահանգով (8) նախատեսված մասնագիտական որակավորման վկայագիր ստացած վարորդներին ազատել 1(ա)(i) եւ (ii) ու 2-րդ պարբերությունում նշված թեստերից՝ այդ Հրահանգում նախատեսված առարկաներից եւ, անհրաժեշտության դեպքում, այդ թեստերին համապատասխան դասընթացներին մասնակցությունից:

Հոդված 4

Ձեռք բերված իրավունքներ

Հետեյալ վարորդներն ազատվում են նախնական որակավորում ստանալու պահանջից.
ա) D1, D1+E, D կամ D+E կարգի կամ համարժեք ճանաչված վարորդական վկայական ունեցող վարորդները, որոնք նրանց տրամադրվել են սույն Հրահանգի փոխատեղման վերջնաժամկետից ոչ ուշ, քան երկու տարի հետո,

բ) այն վարորդները, որոնք ունեն C1, C1+E, C կամ C+E կարգի վարորդական վկայական կամ համարժեք վկայականներ, որոնք թողարկվել են սույն Հրահանգի փոխատեղման վերջնաժամկետից ոչ ուշ, քան երեք տարի անց:

Հոդված 5

Նախնական որակավորում

1. Նախնական որակավորման համար չի պահանջվում նախապես ձեռք բերել համապատասխան վարորդական վկայագիր:

2. Ապրանքներ տեղափոխելու համար նախատեսված փոխադրամիջոցների վարորդները կարող են վարել

ա) 18 տարեկանից,

i) այն տրանսպորտային միջոցը, որը վարելու համար պահանջվում է C եւ C+E կարգերի վկայական՝ պայմանով, որ վարորդներն ունեն ՄՈՎ, ինչպես նշված է 6(1) հոդվածում,

ii) այն տրանսպորտային միջոցը, որը վարելու համար պահանջվում է C1 եւ C1+E կարգերի վկայական՝ պայմանով, որ վարորդներն ունեն ՄՈՎ, ինչպես նշված է 6(2) հոդվածում,

բ) 21 տարեկանից՝ այն տրանսպորտային միջոցը, որը վարելու համար պահանջվում է C եւ C+E կարգերի վկայական՝ պայմանով, որ վարորդներն ունեն ՄՈՎ, ինչպես նշված է 6(2) հոդվածում:

3. Ուղեւորներ փոխադրելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների վարորդները կարող են վարել՝

ա) 21 տարեկանից՝

i) կանոնավոր ուղեւորափոխադրումներ իրականացնող այն տրանսպորտային միջոցը, որը վարելու համար պահանջվում է D եւ D+E կարգերի վկայական, եթե ճանապարհը չի գերազանցում 50 կիլոմետրը եւ այն տրանսպորտային միջոցը, որը վարելու համար պահանջվում է D1 ու D1+E կարգերի վկայական՝ պայմանով, որ նրանք ունեն ՄՈՎ, ինչպես նշված է 6(2) հոդվածում:

Ցանկացած անդամ պետություն կարող է լիազորել վերը նշված կարգերի որեւէ մեկի տրանսպորտային միջոցների վարորդներին նման տրանսպորտային միջոցներ վարել իրենց տարածքում 18 տարեկանից սկսած՝ պայմանով, որ նրանք ունեն ՄՈՎ, ինչպես նշված է 6(1) հոդվածում,

ii) այն տրանսպորտային միջոցը, որը վարելու համար պահանջվում է D եւ D+E կարգերի վկայական՝ պայմանով, որ նրանք ունեն ՄՈՎ, ինչպես նշված է 6(1) հոդվածում:

Ցանկացած անդամ պետություն կարող է լիազորել վերը նշված կարգերից որեւէ մեկի տրանսպորտային միջոցների վարորդներին նման տրանսպորտային միջոցներ վարել իրենց տարածքում 20 տարեկանից սկսած՝ պայմանով, որ նրանք ունեն ՄՈՎ, ինչպես նշված է 6(1) հոդվածում: Եթե վարորդները վարում են այս տրանսպորտային միջոցներն առանց ուղեւորների, տարիքը կարող է նվազեցվել մինչեւ 18 տարեկան,

բ) 23 տարեկանից՝ այն տրանսպորտային միջոցը, որը վարելու համար պահանջվում է D եւ D+E կարգերի վկայական՝ պայմանով, որ վարորդներն ունեն ՄՈՎ, ինչպես նշված է 6(2) հոդվածում:

4. Չհակասելով 2-րդ պարբերությունում նշված տարիքային սահմանափակումներին՝ ապրանքների փոխադրում իրականացնող վարորդները, որոնք ունեն ՄՈՎ, ինչպես նշված է 6-րդ հոդվածում, սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված որեւէ կարգի դեպքում ազատվում են ՄՈՎ ձեռք բերելուց՝ այդ պարբերությունում նշված տրանսպորտային այլ կարգերի համար:

Սույն դրույթները տարածվում են միեւնույն պայմաններով այն վարորդների նկատմամբ, ովքեր իրականացնում են ուղեւորների փոխադրում 3-րդ պարբերությունում նշված կարգերի դեպքում:

5. Այն վարորդներից, ովքեր իրականացնում են ապրանքների փոխադրում, ովքեր ընդլայնում կամ փոփոխում են իրենց գործողությունները ուղեւորներ փոխադրելու համար կամ ընդհակառակը, եւ ովքեր ունեն ՄՈՎ, ինչպես նախատեսված է 6-րդ հոդվածով, չի

պահանջվում կրկնել նախնական որակավորման ընդհանուր մասերը, այլ միայն նոր որակավորման համար հատուկ մասերը:

Հոդված 6

Նախնական որակավորումը հավաստագրող ՄՈՎ-ը

1. Նախնական որակավորումը հավաստագրող ՄՈՎ-ը

ա) Դասընթացներին մասնակցելու եւ թեստերի հիման վրա տրամադրվող ՄՈՎ-ը

3(1)(ա)(i) հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պահանջում են, որ վերապատրաստվող վարորդները մասնակցեն այն վերապատրաստման կենտրոնի դասընթացներին, որը հաստատվել է իրավասու մարմինների կողմից I հավելվածի 5-րդ հոդվածի համաձայն, այսուհետ՝ «հաստատված վերապատրաստման կենտրոն»: Այդ դասընթացները ներառում են I հավելվածի 1-ին հոդվածում նշված առարկաները: Այդ վերապատրաստման դասընթացն ավարտվում է I հավելվածի 2(2.1) հոդվածով նախատեսված՝ բարեհաջող հանձնված թեստով: Այդ թեստը կազմակերպվում է անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից կամ այն մարմնի կողմից, որը նշանակվել է նրանց կողմից եւ ծառայում է՝ ստուգելու համար, թե արդյոք վերը նշված առարկաների դեպքում վերապատրաստվող վարորդը I հավելվածում նշված 1-ին բաժնով նախատեսված գիտելիք ունի: Նշված իրավասու մարմինները կամ նրանց կողմից նշանակված մարմինները վերահսկում են թեստը, բարեհաջող ավարտի դեպքում, վարորդներին հանձնում են նախնական որակավորումը հաստատող ՄՈՎ:

բ) Թեստերի հիման վրա տրամադրվող ՄՈՎ-ը

3(1)(ա)(ii) հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պահանջում են, որ վերապատրաստվող վարորդները հանձնեն I հավելվածի 2(2.2) հոդվածում նշված տեսական եւ գործնական թեստեր: Այս թեստերը կազմակերպվում են անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից կամ նրանց կողմից նշանակված մարմնի կողմից եւ նպատակ ունեն ստուգելու, թե արդյոք բոլոր վերը նշված առարկաների դեպքում վերապատրաստվող վարորդն ունի գիտելիքի այն մակարդակը, որը պահանջվում է I հավելվածի 1-ին հոդվածով: Նշված իրավասու մարմինները կամ նրանց կողմից նշանակված մարմինները վերահսկում են թեստերը եւ բարեհաջող ավարտի դեպքում վարորդներին հանձնում են նախնական որակավորումը հաստատող ՄՈՎ:

2. Արագացված կարգով ստացված նախնական որակավորումը հավաստագրող ՄՈՎ-ը

3(2) հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պահանջում են, որ վերապատրաստվող վարորդը հաճախի դասընթացներին հաստատված վերապատրաստման կենտրոնում: Այս դասընթացները վերաբերում են բոլոր առարկաներին, որոնք նշված են I հավելվածի 1-ին հոդվածում:

Այս դասընթացն ավարտվում է I հավելվածի 3-րդ հոդվածով նախատեսված թեստով: Այդ թեստը կազմակերպվում է անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից կամ նրանց կողմից նշանակված մարմնի կողմից եւ նպատակ ունեն ստուգելու, թե արդյոք վերը նշված առարկաների դեպքում վերապատրաստվող վարորդն ունի գիտելիքի այն մակարդակը, որը պահանջվում է I հավելվածի 1-ին հոդվածով: Նշված իրավասու մարմինները կամ մարմինները վերահսկում են թեստը եւ, բարեհաջող ավարտի դեպքում, վարորդներին են հանձնում նախնական որակավորումը հաստատող ՄՈՎ:

Հոդված 7

Պարբերական վերապատրաստումը

Պարբերական վերապատրաստումը հնարավորություն է տալիս ՄՈՎ ունեցող վարորդներին, ինչպես նշված է 6-րդ հոդվածում եւ 4-րդ հոդվածում նշված վարորդներին թարմացնելու այն գիտելիքը, որն անհրաժեշտ է իրենց աշխատանքի համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով ճանապարհային անվտանգության եւ վառելիքի ռացիոնալ օգտագործման վրա:

Այդ վերապատրաստման դասընթացը կազմակերպվում է հաստատված վերապատրաստման կենտրոնի կողմից՝ I հավելվածի 5-րդ հոդվածի համաձայն: Եթե վարորդը տեղափոխվում է այլ կազմակերպություն, ապա պետք է հաշվի առնել, որ նա արդեն անցել է պարբերական վերապատրաստում:

Պարբերական վերապատրաստման դասընթացը նախատեսված է I հավելվածի 1-ին հոդվածում նշված որոշ առարկաներ առավել մանրամասն ներկայացնելու եւ կրկնելու համար:

Պարբերական վերապատրաստումը հաստատող ՄՈՎ-ը

1. Երբ վարորդն ավարտում է 7-րդ հոդվածում նշված պարբերական վերապատրաստման դասընթացը, անդամ պետությունների իրավասու մարմինները կամ հաստատված վերապատրաստման կենտրոնը նրան է հանձնում պարբերական վերապատրաստումը հաստատող ՄՈՎ:

2. Պարբերական վերապատրաստման դասընթացի առաջին փուլն անցնում են հետևյալ վարորդները՝

ա) ՄՈՎ ունեցողները, ինչպես նշված է 6-րդ հոդվածում՝ ՄՈՎ-ը հանձնելուց հետո հինգ տարվա ընթացքում,

բ) 4-րդ հոդվածում նշված վարորդները, 14(2) հոդվածում նշված համապատասխան ժամկետներում հինգ տարվա ընթացքում՝ անդամ պետությունների կողմից սահմանված ժամանակացույցի համաձայն:

Անդամ պետությունները կարող են կրճատել կամ երկարացնել (ա) եւ (բ) կետերում նշված ժամկետները, մասնավորապես, այնպես, որ դրանք համընկնեն վարորդական վկայականի վավերականության ժամկետի հետ կամ այնպես, որ ապահովեն պարբերական վերապատրաստման դասընթացների աստիճանաբար ներմուծումը: Սակայն այս ժամկետը չի կարող երեք տարուց պակաս կամ յոթ տարուց ավելի լինել:

3. Այն վարորդը, որն ավարտել է 2-րդ պարբերությունում նշված պարբերական վերապատրաստման դասընթացի առաջին փուլը, յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ անցնում է պարբերական վերապատրաստում՝ մինչեւ պարբերական վերապատրաստումը հաստատող ՄՈՎ-ի վավերականության ժամկետի ավարտը:

4. ՄՈՎ ունեցողները, ինչպես նշված է 6-րդ հոդվածում կամ ՄՈՎ-ը, ինչպես նշված է սույն հոդվածի 1-ին պարբերությունում եւ 4-րդ հոդվածում նշված վարորդները, ովքեր դադարեցրել են զբաղվել իրենց մասնագիտությամբ եւ չեն բավարարում 1, 2 եւ 3-րդ պարբերություններում նշված պահանջները, անցնում են պարբերական վերապատրաստման դասընթացների մեկ փուլ՝ նախքան իրենց մասնագիտությամբ նորից զբաղվելը: 5. Ավտոճանապարհով ապրանքների եւ ուղեւորների փոխադրում իրականացնող այն վարորդները, ովքեր ավարտել են պարբերական վերապատրաստման դասընթացները 5(2) եւ (3) հոդվածում նշված վարորդական վկայականների որեւէ կարգի համար,

ազատվում են հետագա պարբերական վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունից այդ պարբերություններում նշված այլ կարգերի համար:

Հոդված 9

Վերապատրաստման դասընթացների անցկացման վայրը

1(ա) հոդվածում նշված վարորդները ձեռք են բերում 5-րդ հոդվածում նշված նախնական որակավորում այն անդամ պետությունում, որտեղ նրանց սովորական բնակության վայրն է, ինչպես սահմանված է թիվ 3821/85 կանոնակարգի (ԵՏՀ) 14-րդ հոդվածով (9):

1(բ) հոդվածում նշված վարորդները նման որակավորում են ձեռք բերում այն անդամ պետությունում, որտեղ հիմնադրվել է կազմակերպությունը կամ այն անդամ պետությունում, որը նրանց աշխատանքի թույլտվություն է տվել:

1(ա) եւ 1(բ) հոդվածում նշված վարորդները 7-րդ հոդվածով նախատեսված պարբերական վերապատրաստման դասընթացներ են անցնում այն անդամ պետությունում, որը նրանց սովորական բնակության վայրն է կամ այն անդամ պետությունում, որտեղ նրանք աշխատում են:

Հոդված 10

Համայնքի կողմ

1. 6 եւ 8(1) հոդվածներում նշված ՄՈՎ-ի հիման վրա՝ անդամ պետությունների իրավասու մարմինները, հաշվի առնելով 5(2) եւ (3) ու 8-րդ հոդվածների դրույթները, սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված Համայնքի կողմ են տեղադրում համապատասխան կարգի հետ մեկտեղ՝

–կամ վարորդական վկայականի վրա,

–կամ վարորդի որակավորման քարտի վրա, որը կազմված է II հավելվածում նշված ձևով:

Անդամ պետությունների կողմից տրամադրված որակավորման քարտը պետք է փոխադարձաբար ճանաչվի: Երբ քարտը տրամադրվում է, իրավասու մարմինները ստուգում են վարորդական վկայականի վավերականությունը, որի համարը նշվում է քարտի վրա:

2. Ներդաշնակեցված Համայնքի կողերի ցուցակում ավելացվում է Համայնքի հետեւյալ կողը, ինչպես սահմանված է 91/439/ԵՏՀ հրահանգի I եւ II հավելվածում՝

«95. 3-րդ հոդվածում նշված մասնագիտական որակավորման պահանջները բավարարող ՄՈՎ (մասնագիտական որակավորման վկայագիր) ունեցող վարորդը մինչեւ (օր.՝ 95. 01.01.2012թ.)»:

3. (ա) 1(բ) հոդվածում նշված վարորդը, ով վարում է տրանսպորտային միջոցներ, որոնք օգտագործվում են ավտոճանապարհով ապրանքների փոխադրման համար, պետք է թիվ 484/2002 կանոնակարգում (ԵՀ) (10) նախատեսված վարորդական վկայականով հաստատի, որ ունի որակավորում եւ անցել է վերապատրաստումը, ինչպես նախատեսված է սույն Հրահանգով:

Բացի վկայականից՝ անդամ պետությունը կարող է նրան տրամադրել վարորդական որակավորման քարտ, ինչպես նախատեսված է II հավելվածում, որում նշված է Համայնքի համապատասխան կողը:

բ) 1(բ) հոդվածում նշված վարորդը, ով վարում է տրանսպորտային միջոցներ, որոնք օգտագործվում են ճանապարհով ուղեւորների փոխադրման համար, պետք է հաստատի, որ ունի որակավորում եւ անցել է վերապատրաստումը, ինչպես նախատեսված է սույն Հրահանգում հետեւյալ միջոցներով՝

–կամ Համայնքի կողը, որը նշված է Համայնքի վարորդական օրինակելի վկայականում, երբ նա ունի նման վկայական կամ –Համայնքի համապատասխան կող ունեցող վարորդի որակավորման քարտը, ինչպես նախատեսված է II հավելվածում կամ

–ազգային վկայական, որի վավերականությունը նրանց տարածքում անդամ պետությունների կողմից փոխադարձաբար ճանաչվում է:

-▼M3

Հոդված 11

Տեխնիկական եւ գիտական առաջընթացին համապատասխանեցումը

I եւ II հավելվածների՝ գիտական եւ տեխնիկական առաջընթացին համապատասխանեցումը, որոնք նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը

փոփոխելու համար, կատարվում է 12(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 12

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-ից մինչև (4)-րդ եւ 7-րդ հոդվածները կիրառվում են՝ հաշվի առնելով որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 13

Հաշվետվություններ

Նախքան 2011 թվականի սեպտեմբերի 10-ը՝ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ, Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտե ու Տարածաշրջանների հարցերով կոմիտե հաշվետվություն է ներկայացնում՝ իրականացնելով սույն Հրահանգի նախնական գնահատումը, մասնավորապես, նախնական որակավորման համակարգերի համարժեքության, ինչպես նախատեսված է 3-րդ հոդվածով եւ որակավորման թիրախային մակարդակին հասնելու դրա արդյունավետության առումով: Հաշվետվությանը կից, անհրաժեշտության դեպքում, ներկայացվում են համապատասխան առաջարկություններ:

Հոդված 14.

Փոխարեղում եւ իրականացում

1. Անդամ պետությունները նախքան 2006 թվականի սեպտեմբերի 10-ը գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները կիրառում են այս ակտերը

–2008 թվականի սեպտեմբերի 10–ից նախնական որակավորման հետ կապված, որն անհրաժեշտ է՝ D1, D1+E, D եւ D+E կարգի տրանսպորտային միջոցներ վարելու համար,

–2009 թվականի սեպտեմբերի 10–ից նախնական որակավորման հետ կապված, որն անհրաժեշտ է՝ C1, C1+E, C եւ C+E կարգի տրանսպորտային միջոցներ վարելու համար:

Անդամ պետությունները դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին եւ այդ ակտերը կիրառելիս աջակցում են մեկը մյուսին:

Հոդված 15

Ուժը կորցրած ճանաչելը

1. Թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) 5–րդ հոդվածում սույնով կատարվում են հետեւյալ փոփոխությունները՝

ա) 1–ին պարբերությունը ուժը կորցրած է ճանաչվում 2009 թվականի սեպտեմբերի 10–ից:

բ) 2–րդ եւ 4–րդ պարբերություններն ուժը կորցրած են ճանաչվում 2008 թվականի սեպտեմբերի 10–ից:

2. 76/914/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2009 թվականի սեպտեմբերի 10–ից:

3. Օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները, որոնք ընդունվում են 76/914/ԵՏՀ հրահանգին համապատասխանելու համար, դադարում են կիրառվել՝

–2008 թվականի սեպտեմբերի 10–ից ճանապարհով ուղեւորներ փոխադրող տրանսպորտային միջոցների վարորդների նկատմամբ,

–2009 թվականի սեպտեմբերի 10–ից ճանապարհով ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների վարորդների նկատմամբ:

Հոդված 16

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակման օրը:

Հոդված 17

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

**ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Բաժին 1

Առարկաների ցանկ

Անդամ պետությունները վարորդների նախնական որակավորումը եւ պարբերական վերապատրաստումը հաստատելիս պետք է հաշվի առնեն, որ վարորդները պետք է գիտելիքներ ունենան առնվազն սույն ցանկում նշված առարկաներից: Վերապատրաստվող վարորդները պետք է ունենան գիտելիքի այն մակարդակը եւ գործնական այն որակավորումը, որն անհրաժեշտ է՝ վարորդական վկայականի համապատասխան կարգի բոլոր տրանսպորտային միջոցները վարելու համար:

Գիտելիքի նվազագույն մակարդակը պետք է համապատասխանի վերապատրաստման դասընթացի առնվազն 2-րդ մակարդակին, ինչպես նախատեսված է 85/368/ԵՏՀ (11) որոշման I հավելվածով, այն է՝ պարտադիր կրթության ժամանակ ձեռք բերված մակարդակը, որը լրացվում է մասնագիտական դասընթացով:

1. Անվտանգության կանոնակարգերի վրա հիմնված ճիշտ վարելու վերաբերյալ խորացված վերապատրաստման դասընթաց

Վարորդական բոլոր վկայականները:

1.1. Նպատակը՝ Փոխանցման համակարգի հատկանիշների իմացություն՝ դրա հնարավոր ամենաճիշտ օգտագործման համար.

Պտտող մոմենտի կորը, էներգիայի եւ շարժիչի հատուկ շահագործումը եւ տախոմետրի օպտիմալ օգտագործումը, փոխանցման տուփ

– մեքենայի արագություն հարաբերակցության սխեմաները:

1.2. Նպատակը՝ տեխնիկական հատկանիշների եւ անվտանգության պահպանության իմացություն՝ տրանսպորտային միջոցը կառավարելու, մաշվածությունը նվազեցնելու եւ վատ աշխատանքը կանխելու համար,

Հիդրավլիկ օժանդակ արգելակի հատուկ հատկանիշները, արգելակների եւ դանդաղիչների օգտագործման սահմանները, արգելակների եւ դանդաղիչների համատեղ օգտագործումը, արագության եւ փոխանցման հարաբերակցության ավելի լավ օգտագործումը, մեքենայի իներցիայի օգտագործումը, լանջի վրա դանդաղեցնելու եւ արգելակելու միջոցների կիրառումը, ծախսողման դեպքում՝ գործողությունները:

1.3. Նպատակը՝ Վառելիքի օպտիմալ օգտագործման ունակություն,

Վառելիքի օպտիմալ օգտագործում՝ 1.1 եւ 1.2. կետերի վերաբերյալ կիրառելով «նոու հաու»:

C, C+E, C1, C1+E կարգի վարորդական վկայականներ

1.4. Նպատակը՝ Տրանսպորտային միջոցի բեռնման ունակությունը՝ հաշվի առնելով անվտանգության կանոնները եւ տրանսպորտային միջոցի պատշաճ օգտագործումը, ուժերը, որոնք ազդում են շարժման մեջ տրանսպորտային միջոցի վրա, փոխանցման տուփի հարաբերության օգտագործումը բեռների ծավալի եւ ճանապարհի վիճակի համաձայն, տրանսպորտային միջոցի բեռնունակության կամ հավաքվածքի հաշվարկ, ընդհանուր ծավալի հաշվարկ, բեռի բաշխում, առանցքի գերբեռնվածության հետեւանքները, տրանսպորտային միջոցի կայունությունը եւ ծանրության կենտրոնը, փաթեթավորման տեսակները եւ տակդիրները,

Ապահովության, ամրացման եւ անվտանգության միջոցների կարիք ունեցող ապրանքների տեսակները, անվտանգության ամրակների օգտագործում, անվտանգության սարքավորումների ստուգում, հեռակառավարման սարքերի օգտագործում, բրեզենտի տեղադրում եւ հանում:

D, D+E, D1, D1+E վարորդական վկայականներ

1.5. Նպատակը՝ ուղեւորների հարմարավետության եւ անվտանգության ապահովման ունակություն՝

հարմարեցնելով երկայնական եւ կողային շարժը, ճանապարհը բաշխելը, ճանապարհի վրա դիրքը, հանդարտ արգելակելը, ծածկի օգտագործումը, հատուկ ենթակառուցվածքների օգտագործումը (հանրային տարածքներ, նշանակված փողոցներ), որպես վարորդ՝ անվտանգ երթեւեկության եւ այլ գործառույթների հետ կապված կոնֆլիկտների

կառավարումը, ուղեւորների հետ շփումը, հատուկ խմբի ուղեւորների առանձնահատկությունները (հաշմանդամ անձինք, երեխաներ):

1.6. Նպատակը՝ Տրանսպորտային միջոցի բեռնման ունակությունը՝ հաշվի առնելով անվտանգության կանոնները եւ տրանսպորտային միջոցի պատշաճ օգտագործումը,

այն ուժերը, որոնք ազդում են շարժման մեջ տրանսպորտային միջոցի վրա, փոխանցման տուփի հարաբերության օգտագործումը բեռների ծավալի եւ ճանապարհի վիճակի համաձայն, տրանսպորտային միջոցի կամ հավաքվածքի բեռնունակության հաշվարկը, բեռի բաշխումը, առանցքի գերբեռնվածության հետեւանքները, տրանսպորտային միջոցի կայունությունը եւ ծանրության կենտրոնը:

2. Կանոնակարգերի կիրառումը

Վարորդական բոլոր վկայականները

2.1. Նպատակը՝ Ճանապարհային տրանսպորտի եւ այն կառավարող սոցիալական մթնոլորտի իմացություն՝

Տրանսպորտային արդյունաբերությանը բնորոշ աշխատանքային առավելագույն ժամերը՝ թիվ 3820/85 եւ 3821/85 կանոնակարգերի (ԵՏՀ) կիրառումը եւ հետեւանքները, պտուտաչափը չօգտագործելու, սխալ օգտագործելու եւ կեղծելու համար տույժեր, ճանապարհային տրանսպորտի սոցիալական միջավայրի իմացություն, նախնական որակավորման եւ պարբերական վերապատրաստման վերաբերյալ վարորդների իրավունքներն ու պարտականությունները:

C, C+E, C1, C1+E կարգի վարորդական վկայականները

2.2. Նպատակը՝. ապրանքների փոխադրումը կառավարող կանոնակարգերի իմացություն՝

տրանսպորտի շահագործման վարորդական վկայականներ, ապրանքների փոխադրման ստանդարտ պայմանագրերի համաձայն պարտականություններ, փաստաթղթերի մշակում, որոնց հիման վրա կազմվում են փոխադրման մասին պայմանագրերը, տրանսպորտի միջազգային օգտագործման թույլտվություն, «Բեռների ավտոճանապարհով միջազգային փոխադրումների պայմանագրերի մասին» կոնվենցիա, միջազգային բեռնման կարգադրագրերի մշակում, սահմանների անցում, բեռնափոխադրողներ, ապրանքներին կից հատուկ փաստաթղթեր:

D, D+E, D1, D1+E կարգի վարորդական վկայականները

- 2.3. Նպատակը՝ ուղեւորների փոխադրումը կառավարող կանոնակարգերի իմացություն՝ ուղեւորների հատուկ խմբերի փոխադրում, ավտոբուսների վրա անվտանգության սարքեր, անվտանգության գոտիներ, տրանսպորտային միջոցի բեռնվածք:
3. Առողջապահություն, ճանապարհային եւ շրջակա միջավայրի անվտանգություն, ծառայություն, նյութատեխնիկա

Վարորդական բոլոր վկայականները

- 3.1. Նպատակը՝ վարորդներին տեղեկացնել աշխատանքի ժամանակ ճանապարհների վտանգների եւ պատահարների մասին՝ տրանսպորտի ոլորտում աշխատանքի ժամանակ պատահարների տեսակները, ճանապարհային պատահարների վիճակագրություն, բեռնատարների եւ ավտոմեքենաների ներգրավվածությունը, մարդկային, նյութական եւ ֆինանսական հետեւանքները:
- 3.2. Նպատակը՝ անօրինական ներգաղթողների քրեական պատասխանատվության եւ թրաֆիքինգի կանխման կարողությունը՝ ընդհանուր տեղեկություն, վարորդների համար հետեւանքները, կանխարգելիչ միջոցառումները, ստուգման ցուցակը, տրանսպորտի օպերատորի պատասխանատվության մասին օրենսդրություն:
- 3.3. Նպատակը՝ ֆիզիկական վտանգների կանխման ունակություն՝ էրգոնոմիկական սկզբունքները, շարժումներն ու դիրքերը, որոնք վտանգ են ստեղծում, ֆիզիկական պատրաստվածությունը, ֆիզիկական վարժությունների իրականացում, անձնական պաշտպանվածություն:
- 3.4. Նպատակը՝ ֆիզիկական եւ մտավոր ունակության կարելիության գիտակցումը՝ առողջ, հավասարակշռված սննդի օգտագործման սկզբունքները, ալկոհոլի, թմրանյութերի եւ այլ նյութերի, որոնք կարող են ազդել վարքագծի վրա, բացասական ազդեցությունը, ախտանշանները, պատճառները, լարվածության եւ ստրեսի ազդեցությունը, հիմնական աշխատանք/հանգիստ պարբերաշրջանի հիմնական դերը:
- 3.5. Նպատակը՝ արտակարգ իրավիճակների գնահատման կարողություն՝

վարքագիծը արտակարգ իրավիճակների ժամանակ՝ իրավիճակի գնահատում, պատահարի բարդություններից խուսափում, աջակցության տրամադրում, պատահարների ժամանակ աջակցություն եւ առաջին օգնության տրամադրում, հրդեհի ժամանակ արձագանք, բեռնատարների/ավտոբուսների ուղեւորների տարահանում, բոլոր ուղեւորների անվտանգության ապահովում, արձագանք ագրեսիայի դեպքում, պատահարների մասին հաշվետվության մշակման հիմնական սկզբունքներ:

3.6. Նպատակը՝ կազմակերպության հեղինակության բարձրացմանը նպաստող պահվածք դրսևորելու կարողությունը՝

վարորդի վարքագիծը եւ կազմակերպության հեղինակությունը՝ վարորդի կողմից տրամադրված ծառայության չափանիշի կարելիությունը, վարորդի գործառույթները, վարորդի հետ առնչություն ունեցող անձինք, տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումը, աշխատանքի կազմակերպումը, տարաձայնությունների դեպքում առևտրային եւ ֆինանսական հետեւանքները:

C, C+E, C1, C1+E կարգի վարորդական վկայականները

3.7. Նպատակը՝ ավտոճանապարհային փոխադրումների տնտեսական միջավայրի եւ շուկայի կառուցվածքի իմացությունը՝

ավտոտրանսպորտային միջոցներով փոխադրումներն այլ տեսակի տրանսպորտային միջոցներով փոխադրումների համեմատությամբ (մրցակցություն, բեռնառաքողներ), ավտոճանապարհային տրանսպորտային տարբեր ծառայությունները (վարձատրության կամ պարգևատրման դիմաց փոխադրում, իր հաշվին, տրանսպորտային լրացուցիչ գործողություններ), տրանսպորտային կազմակերպությունների հիմնական տեսակների կազմակերպում եւ լրացուցիչ տրանսպորտային ծառայություններ, տրանսպորտային ոլորտում տարբեր մասնագիտացումներ (ավտոցիստեռն, վերահսկվող ջերմաստիճան եւ այլն), փոփոխություններ արդյունաբերությունում (տրամադրվող ծառայությունների բազմազանեցում, երկաթգիծ, ենթապայմանագրեր եւ այլն):

D, D+E, D1, D1+E կարգի վարորդական վկայականները

3.8. Նպատակը՝ ավտոճանապարհով ուղևորափոխադրումների տնտեսական միջավայրի եւ շուկայի կառուցվածքի իմացություն՝

ուղեւորների փոխադրումը ավտոճանապարհով ուղեւորների փոխադրման տրանսպորտային այլ միջոցների հետ համեմատություն (երկաթուղի, մասնավոր ավտոմեքենա), ճանապարհով ուղեւորների փոխադրման տարբեր գործողություններ, սահմանների անցում (միջազգային տրանսպորտ), ճանապարհով ուղեւորների փոխադրման հիմնական ընկերությունների կազմակերպում:

Բաժին 2.

3(1)(ա) հոդվածով նախատեսված պարտադիր նախնական որակավորումը

2.1. Դասընթացներին այցելելու եւ թեստավորման համադրությունը

Նախնական որակավորումը պետք է ներառի 1-ին բաժնում ներկայացված ցուցակում ներմուծված բոլոր առարկաների ուսուցման ապահովումը: Նախնական որակավորման դասընթացի տեւողությունը պետք է լինի 280 ժամ:

Յուրաքանչյուր վերապատրաստվող վարորդ պետք է անհատական կարգով վարի առնվազն 20 ժամ տվյալ կարգի տրանսպորտային միջոցը, որը բավարարում է առնվազն փորձարկվող տրանսպորտային միջոցի պահանջները, որոնք սահմանված են 91/439/ԵՏՀ հրահանգով:

Անհատական կարգով վարելիս վերապատրաստվող վարորդին պետք է ուղեկցի հաստատված վերապատրաստման կենտրոնի վարորդ-հրահանգիչը: Յուրաքանչյուր վարորդ կարող է վարել անհատական կարգով վարելու 20 ժամից առավելագույնը ութ ժամը հատուկ տարածքում կամ լեռնային սիմուլյատորի վերին մասերում, այնպես, որ գնահատի ռացիոնալ վարելու մասին դասընթացը անվտանգության կանոնների հիման վրա, մասնավորապես՝ տրանսպորտային միջոցի առնչությամբ, որը սպասարկում է ճանապարհային տարբեր պայմաններում եւ մթնոլորտային պայմանների փոփոխությունների ու ցերեկային կամ գիշերային ժամերին:

5(5) հոդվածում նշված վարորդների դեպքում նախնական որակավորման դասընթացի տեւողությունը պետք է լինի 70 ժամ՝ ներառյալ անհատական կարգով վարելու հինգ ժամը:

Այդ դասընթացի ավարտին անդամ պետությունների իրավասու մարմինները կամ նրանց կողմից նշանակված մարմինները վարորդին տալիս են գրավոր կամ բանավոր թեստ: Թեստը պետք է ընդգրկի 1-ին բաժնի համաձայն առարկաների ցանկում ընդգրկված յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ առնվազն մեկ հարց:

2.2. Թեստ

Անդամ պետությունների իրավասու մարմինները կամ նրանց կողմից նշանակված մարմինները կազմակերպում են վերը նշված տեսական եւ գործնական թեստերը՝ ստուգելու, թե արդյոք վերապատրաստվող վարորդն ունի 1-ին բաժնով պահանջված գիտելիքի մակարդակը, որն անհրաժեշտ է՝ այնտեղ նշված առարկաների եւ նպատակների համար:

ա) Տեսական թեստը բաղկացած է առնվազն երկու մասից՝

i) ընտրովի պատասխաններով հարցեր, ուղղակի պատասխան ակնկալող հարցեր կամ երկուսն էլ միասին,

ii) կոնկրետ դեպքեր:

Տեսական թեստի նվազագույն տեսողությունը պետք է լինի չորս ժամ:

բ) Գործնական թեստը բաղկացած է երկու մասից՝

i) վարորդական թեստ, որի նպատակը ռացիոնալ վարելու մասին դասընթացը գնահատելն է՝ անվտանգության կանոնակարգերի հիման վրա: Թեստը պետք է անցկացվի, երբ հնարավոր է ճանապարհների վրա՝ կառուցապատված տարածքներից դուրս, ճեպընթացների եւ ավտոմայրուղիների (կամ նմանատիպ) վրա եւ բոլոր տեսակների քաղաքային մայրուղիների վրա՝ ներկայացնելով տարբեր խոչընդոտներ, որոնց վարորդը կարող է հանդիպել: Ցանկալի է, որ այդ թեստն անցկացվի տարբեր աստիճանի ծանրաբեռնվածությամբ երթեւեկության պայմաններում: Ճանապարհին վարելու ժամանակը պետք է առավելագույն օգտագործվի՝ երթեւեկության բոլոր տարածքներում հավանական թեկնածուին գնահատելու համար: Այս թեստի նվազագույն ժամանակը պետք է կազմի 90 րոպե:

(ii) գործնական թեստ, որը վերաբերում է առնվազն 1.4, 1.5, 1.6, 3.2, 3.3 եւ 3.5 կետերին:

Այս թեստի նվազագույն ժամանակը պետք է կազմի 30 րոպե:

Գործնական թեստի համար օգտագործվող տրանսպորտային միջոցը պետք է բավարարի փորձարկվող տրանսպորտային միջոցի համար առնվազն 91/439/ԵՏՀ հրահանգով սահմանված պայմանները:

Գործնական թեստը կարող է լրացվել երրորդ թեստով, որն անցկացվում է հատուկ տարածքում կամ լեռնային սիմուլյատորի վերին մասում, այնպես, որ գնահատի ռացիոնալ վարելու մասին դասընթացը անվտանգության կանոնների հիման վրա, մասնավորապես՝

տրանսպորտային միջոցի առնչությամբ, որը սպասարկում է ճանապարհային տարբեր պայմաններում եւ մթնոլորտային պայմաններում դրանց փոփոխությունների դեպքում եւ ցերեկային կամ գիշերային ժամերին:

Այս լրացուցիչ թեստի տեւողությունը հաստատված չէ: Եթե վարորդը նման թեստ է հանձնում, ապա դրա տեւողությունը կարող է հանվել (i) կետում նշված վարորդական թեստի 90 րոպեից, բայց հանված ժամանակը չի կարող գերազանցել 30 րոպեն:

5(5) հոդվածում նշված վարորդների դեպքում տեսական թեստը պետք է սահմանափակվի 1-ին բաժնում նշված առարկաներով, որոնք առնչվում են այն տրանսպորտային միջոցներին, որոնց նկատմամբ կիրառվում է նախնական նոր որակավորումը: Սակայն նման վարորդները պետք է անցնեն գործնական ամբողջ թեստը:

Բաժին 3.

3(2) հոդվածով նախատեսված՝ արագացված նախնական որակավորում

Արագացված նախնական որակավորումը պետք է ընդգրկի 1-ին բաժնում նշված բոլոր առարկաների ուսուցումը: Դրա տեւողությունը պետք է 140 ժամ լինի:

Յուրաքանչյուր վերապատրաստվող վարորդ պետք է առնվազն 10 ժամ անհատական կարգով վարի տվյալ կարգի տրանսպորտային միջոցը, որը բավարարում է առնվազն փորձարկվող տրանսպորտային միջոցի պահանջները, որոնք սահմանված են 91/439/ԵՏՀ հրահանգում:

Անհատական կարգով վարելիս վերապատրաստվող վարորդին պետք է ուղեկցի հաստատված վերապատրաստման կենտրոնի վարորդ-հրահանգիչը: Յուրաքանչյուր վարորդ կարող է վարել անհատական կարգով վարելու 10 ժամից առավելագույնը չորս ժամը հատուկ տարածքում կամ լեռնային սիմուլյատորի վերին մասում, այնպես, որ ռացիոնալ վարելու մասին դասընթացը գնահատի անվտանգության կանոնների հիման վրա, մասնավորապես՝ հաշվի առնելով տրանսպորտային միջոցի կառավարման առանձնահատկությունները ճանապարհային տարբեր պայմաններում, մթնոլորտային տարբեր պայմաններում կատարվող փոփոխությունների պարագայում եւ ցերեկային կամ գիշերային ժամերին:

5(5) հողվածում նշված վարորդների առնչությամբ արագացված կարգով նախնական որակավորման դասընթացի տեւողությունը պետք է լինի 35 ժամ՝ ներառյալ անհատական կարգով վարելու երկուսուկես ժամը:

Այդ դասընթացի ավարտին անդամ պետությունների իրավասու մարմինները կամ նրանց կողմից նշանակված մարմինները վարորդին տալիս են գրավոր կամ բանավոր թեստ: Թեստը պետք է ընդգրկի 1-ին բաժնում նշված ցուցակի յուրաքանչյուր առարկայի նպատակի վերաբերյալ առնվազն մեկ հարց:

Բաժին 4

3(1)(բ) հողվածով նախատեսված պարտադիր պարբերական վերապատրաստումը

Պարտադիր պարբերական վերապատրաստման դասընթացները պետք է կազմակերպվեն հաստատված վերապատրաստման կենտրոնի կողմից: Դրանց տեւողությունը պետք է լինի 35 ժամ յուրաքանչյուր հինգ տարին մեկ, անցկացվեն առնվազն յոթ ժամ տեւողությամբ Նման պարբերական վերապատրաստման դասընթացները կարող են տրամադրվել մասամբ լեռնային սիմուլյատորի վերին մասում: Բաժին 5. Նախնական որակավորման եւ պարբերական վերապատրաստման հաստատումը

5.1. Վերապատրաստման կենտրոնները, որոնք մասնակցում են նախնական որակավորմանը եւ պարբերական վերապատրաստման դասընթացներին, պետք է հաստատվեն անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից: Հաստատումը կարող է տրվել միայն գրավոր դիմումի հիման վրա: Դիմումին պետք է կցվեն հետեւյալ փաստաթղթերը՝

5.1.1. պատշաճ որակավորման եւ դասընթացների ծրագիր, որը հաստատում է դասավանդվող առարկաներն ու սահմանում է առաջարկվող իրականացման պլանը եւ ուսուցման մեթոդները,

5.1.2. վարորդ-հրահանգիչների որակավորումը եւ գործողության ոլորտները,

5.1.3. տեղեկություն այն հաստատությունների մասին, որտեղ անցկացվում են դասընթացները, ուսումնական նյութերը, գործնական աշխատանքի համար մատչելի ռեսուրսները եւ օգտագործվող ավտոպարկը,

5.1.4. դասընթացներին մասնակցելու պայմանները (մասնակիցների թիվը),

5.2. Իրավասու մարմինը պետք է գրավոր հաստատի հետևյալ պայմանների դեպքում՝

5.2.1. վերապատրաստման դասընթացը պետք է անցկացվի դիմումին կցված փաստաթղթերի համաձայն,

5.2.2. Իրավասու մարմինը պետք է իրավունք ունենա լիազորված անձանց նշանակելու հաստատված կենտրոններում՝ վերապատրաստման դասընթացների կազմակերպմանն աջակցելու համար եւ պետք է իրավունք ունենա դիտանցում իրականացնելու նման կենտրոններում՝ օգտագործվող ռեսուրսների ու վերապատրաստման դասընթացների եւ թեստերի պատշաճ իրականացման առնչությամբ,

5.2.3. Հաստատումը կարող է չեղյալ համարվել կամ կասեցվել, եթե հաստատման պայմաններն այլեւս չեն պահպանվում:

Հաստատված կենտրոնը պետք է երաշխավորի, որ վարորդ–հրահանգիչները բավարար գիտելիք ունենան վերջին կանոնակարգերի եւ դասավանդման պահանջների մասին: Որպես ընտրության հատուկ ընթացակարգ՝ վարորդ–հրահանգիչները պետք է ներկայացնեն փաստաթուղթ այն մասին, որ համապատասխան գիտելիք ունեն դասավանդվող առարկայի եւ դասավանդման մեթոդների վերաբերյալ: Ինչ վերաբերում է դասընթացի գործնական հատվածին, ապա վարորդ–հրահանգիչները պետք է ներկայացնեն հմուտ վարորդի կամ նման վարորդական փորձ ունենալը հաստատող փաստաթուղթ, ինչպես, օրինակ՝ բեռնատար փոխադրամիջոցների վարման դասավանդման փորձը հաստատող փաստաթուղթը:

Դասավանդման ծրագիրը պետք է համապատասխանի հաստատման պահանջներին եւ ընդգրկի 1–ին բաժնում նշված առարկաների ցուցակը:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՎԱՐՈՐԴԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԻ ՆՄՈՒՇԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Քարտի ֆիզիկական հատկանիշները պետք է համապատասխանեն ԻՍՕ 7810 եւ 7816-1 ստանդարտներին: Քարտի ֆիզիկական հատկանիշների՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցումը գնահատելը պետք է կատարվի ԻՍՕ 10373 ստանդարտի համաձայն:

2. Քարտն ունի երկու կողմ՝

1-ին կողմը պարունակում է

ա) «Վարորդի որակավորման քարտ» բառերը՝ տպագրված մեծ տառերով՝ քարտը տրամադրող անդամ պետության պետական լեզվով կամ լեզուներով,

բ) քարտը տրամադրող անդամ պետության անվանումը (պարտադիր չէ),

գ) քարտը տրամադրող անդամ պետության տարբերանշանը, որը տպագրված է նեգատիվի վրա կապույտ ուղղանկյան տեսքով եւ շրջապատված է տասներկու դեղին աստղերով, տարբերանշաններն են՝

B Բելգիա

▼M2

Բուլղարիա

▼B

CZ Չեխիայի Հանրապետություն

DK Դանիա

D Գերմանիա

EST Էստոնիա

GR Հունաստան

E Իսպանիա

F Ֆրանսիա

IRL Իռլանդիա

I Իտալիա

CY Կիպրոս

LV Լատվիա

LT Լիտվա

L Լյուքսեմբուրգ

H Հունգարիա

M Մալթա

NL Նիդեռլանդներ

A Ավստրիա

PL Լեհաստան

P Պորտուգալիա

▼M2

RO Ռումինիա

▼B

SLO Սլովենիա

SK Սլովակիա

FIN Ֆինլանդիա

S Շվեդիա

UK Միացյալ Թագավորություն

դ) քարտում տրված տեղեկությունները՝ հետեւյալ կերպով թվարկված՝

1. քարտի տիրոջ ազգանունը.
2. քարտի տիրոջ անունը.
3. քարտի տիրոջ ծննդյան ամսաթիվը եւ վայրը.
- 4.

ա) ներկայացնելու ամսաթիվը,

բ) ժամկետը լրանալու ամսաթիվը) տրվող մարմնի անունը (կարող է տպագրվել երկրորդ կողմում), դ) վարորդական վկայականի համարից տարբերվող համար վարչարարական նպատակներով (պարտադիր չէ),

ա) վարորդական վկայականի համարը,

բ) սերիայի համարը,

6. վկայականի տիրոջ լուսանկարը,

7. վկայականի տիրոջ ստորագրությունը,

8. մշտական բնակության վայրը կամ փոստային հասցեն (կամընտիր է),

9. տրանսպորտային միջոցների ենթադասերը, որոնց համար վարորդը բավարարում է նախնական որակավորման եւ պարբերական վերապատրաստման պահանջները,

ե) կապույտ գույնի վրա տպագրված՝ վկայականը տվող անդամ պետության պետական լեզվով կամ լեզուներով «Եվրոպական համայնքների օրինակելի ձեւ» բառերը եւ Համայնքի այլ լեզուներով «վարորդի որակավորման քարտ» բառերը, կազմում են վկայականի ֆոնը.

▼M2

карта за квалификация на водача

▼B

Osvědčení profesní způsobilosti řidiče

chaufføruddannelsesbevis

Fahrerqualifizierungsnachweis

juhi ametipädevuse kaart

δελτίο επιμόρφωσης οδηγού

վարորդի որակավորման քարտ

carte de qualification de conducteur

cárta cáilíochta tiomána

carta di qualificazione del conducente

vadītāja kvalifikācijas apliecība

vairuotojo kvalifikacinė kortelė

gépjárművezetői képesítési igazolvány

karta ta' kwalifikazzjoni tas-sewwieq

kwalificatiekaart bestuurder

karta kwalifikacji kierowcy

carta de qualificação do motorista

▼M2

Cartela de pregătire profesională a conducătorului auto

▼B

preukaz o kvalifikácii vodiča

kartica o usposobljenosti voznika

kuljettajan ammattipätevyyskortti

yrkeskompetensbevis för förare;

զ) գույները.

– կապույտ՝ պանտոն ռեֆլեքս կապույտ

– դեղին՝ պանտոն դեղին:

2-րդ կողմը պարունակում է

ա)

9. տրանսպորտային միջոցների ենթադասերը, որոնց համար վարորդը բավարարում է նախնական որակավորման եւ պարբերական վերապատրաստման պահանջները,

10. Սույն Հրահանգի 10-րդ հոդվածով նախատեսված Համայնքի կողմ,

11. բաց թողնված (ազատ) մաս քարտը տրամադրող անդամ պետության կողմից քարտի հետ կապված հարցերի կարգավորման կամ ճանապարհային անվտանգության հետ կապված կարեւոր տեղեկությունների հնարավոր մուտքագրման համար (պարտադիր չէ):

Եթե մանրամասն տեղեկությունները վերաբերում են սույն հավելվածում սահմանված վերնագրին, նման մանրամասներին պետք է նախորդի համապատասխան վերնագրի համարը,

բ) համարակալված այն կետերի բացատրությունը, որոնք զետեղված են քարտի 1-ին եւ 2-րդ էջերի վրա (առնվազն 1, 2, 3, 4 (ա), 4 (բ), 4 (գ), 5(ա), 5(բ) եւ 10-րդ կետերը):

Եթե անդամ պետությունը ցանկանում է մուտքագրումները կատարել հետեւյալ լեզուներից տարբեր ազգային լեզուներով՝ բուլղարերեն, իսպաներեն, չեխերեն, դանիերեն, գերմաներեն, էստոներեն, հունարեն, անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, լատվիերեն, լիտվերեն, հունգարերեն, մալթերեն, հոլանդերեն, լեհերեն, պորտուգալերեն, ռումիներեն, սլովակերեն, սլովեներեն, ֆիններեն եւ շվեդերեն, ապա այն կկազմի քարտի երկլեզու տարբերակը՝ օգտագործելով նշված լեզուներից որեւէ մեկը՝ չհակասելով սույն հավելվածի մյուս դրույթներին:

3. Անվտանգություն՝ ներառյալ տվյալների պահպանումը

Քարտի տարբեր բաղկացուցիչ մասերի նպատակը կեղծումները կամ խարդախությունները բացառելը եւ դրանց ցանկացած փորձ հայտնաբերելն է:

Անդամ պետությունը պետք է ապահովի, որ քարտի անվտանգության մակարդակը համեմատելի լինի վարորդական վկայականի անվտանգության մակարդակի հետ:

4. Հատուկ պահանջներ

Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո անդամ պետությունները կարող են ավելացնել գույներ կամ նշաններ, ինչպես, օրինակ՝ շտրիխ կոդեր, ազգային խորհրդանիշներ եւ անվտանգության միջոցներ՝ չհակասելով սույն հավելվածի մյուս դրույթներին:

Քարտերի փոխադարձ ճանաչման հետ կապված շտրիխ կոդը չի կարող ընդգրկել ցանկացած տեղեկություն, բացի այն տեղեկությունից, որն արդեն երեւում է վարորդի որակավորման քարտի վրա կամ որն անհրաժեշտ է քարտի տրամադրման համար:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՎԱՐՈՐԴԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԻ ՁԵՎԸ

Side 1



DRIVER QUALIFICATION CARD

(MEMBER STATE)

1.
2.
3.
4a. 4b.
4c. (4d.)
5a. 5b.
7.
(8.)

6. PHOTO

9.

Side 2

11.

1. Surname
2. First name
3. Date and place of birth
4a. Date of issue
4b. Administrative expiry date
4c. Issued by
5a. Licence No
5b. Serial No
10. Community code

9.	10.
C1	
C	
D1	
D	
C1E	
CE	
D1E	
DE	

1) ՊՏ C 154 E, 29.05.2001թ., էջ 258 եւ ՊՏ C 20 E, 28.01.2003թ., էջ 263:

2) ՊՏ C 260, 17.09.2001թ., էջ 90:

3) Եվրոպական պառլամենտի 2002 թվականի հունվարի 17-ի եզրակացություն (ՊՏ C 271 E, 07.11.2002թ., էջ 381), Խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 5-ի ընդհանուր դիրքորոշում

(ՊՏ C 32 E, 11.02.2003թ., էջ 9) եւ Եվրոպական պառլամենտի 2003 թվականի ապրիլի 8-ի որոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում): Խորհրդի 2003 թվականի հունիսի 13-ի որոշում:

4) Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի «Ավտոճանապարհային տրանսպորտին առնչվող որոշակի սոցիալական հարցերով օրենսդրության ներդաշնակեցման մասին» 3820/85 կանոնակարգը (ԵՏՀ) (ՊՏ L 370, 31.12.1985թ., էջ 1):

5) Խորհրդի 1976 թվականի դեկտեմբերի 16-ի «Որոշ ավտոճանապարհային վարորդների դեպքում վերապատրաստման նվազագույն մակարդակի մասին» 76/914/ԵՏՀ հրահանգը (ՊՏ L 357, 29.12.1976թ., էջ 36):

6) Խորհրդի 1991 թվականի հուլիսի 29-ի «Վարորդական վկայականների մասին» 91/439/ԵՏՀ հրահանգը (ՊՏ L 237, 24.08.1991թ., էջ 1), հրահանգը վերջին անգամ փոփոխվել է Հանձնաժողովի հրահանգով 2000/56/ԵՀ (ՊՏ L 237, 21.09.2000թ., էջ 45)

7) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

8) ԽՈՐՀՐԴԻ 1996 թվականի ապրիլի 29-ի 96/26/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ Ավտոճանապարհային փոխադրման եւ ուղեւորափոխադրման օպերատորի գործունեություն ծավալելը թույլատրելու եւ այդ օպերատորներին ազգային եւ միջազգային փոխադրումների ոլորտում գործունեություն իրականացնելու իրավունք տալու նպատակով դիպլոմների, վկայականների եւ որակավորումների մասին վկայող այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին (ՊՏ L 124, 23.05.1996թ., էջ 1), Հրահանգը վերջին անգամ փոփոխվել է 98/76/ԵՀ հրահանգով (ՊՏ L 277, 14.10.1998թ., էջ 17):

9) Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի «Ավտոճանապարհային միջոցներում ծայնագրող սարքերի մասին» թիվ 3821/85 կանոնակարգը (ԵՏՀ) (ՊՏ L 370, 03.12.1985թ., էջ 8), կանոնակարգը վերջին անգամ փոփոխվել է Հանձնաժողովի թիվ 1360/2002 կանոնակարգով (ՊՏ L 207, 05.08.2002թ., էջ 1):

10) Խորհրդի թիվ 881/92 եւ 3118/93 բեռների փոխադրումը թույլտվության նպատակներից ելնելով կանոնակարգերը (ԵՏՀ) փոփոխող Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի մարտի 1-ի թիվ 484/2002 կանոնակարգը (ՊՏ L 76, 19.3.2002թ., էջ 1):

11) Խորհրդի 1985 թվականի հուլիսի 16-ի «Եվրոպական համայնքի անդամ պետությունների միջեւ մասնագիտական վերապատրաստման դասընթացների որակավորումը համադրելու մասին» 85/368/ԵՏՀ որոշումը (ՊՏ L 199, 31.07.1985թ., էջ 56):